№ 167 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 № 167

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդեօք ընդունակ կը լինի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերօսինի ակցիզը. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւելքից արեւմուտք.

ԱՐԴԵՕՔ ԸՆԴՈՒՆԱՐԿ ԿԸ ԼԻՆԻ

—

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ մի յատուկ յանձնաժողով ուսումնասիրում է էջմիածնապատկան Մարցի կալուածքի տնտեսական պայմանները: Այդ կալուածքը, ինչպէս յայտնի է, գտնվում է Բօրչալուի գաւառի Լօռու մասում, որ այժմ Կարսի երկաթուղու պատճառով մօտեցել է մեծ ճանապարհներին և վաճառանոցներին: Շնորհիւ այդ հանգամանքի՝ կալուածքի ահագին անտառները, որոնք առաջ անկարող էին արտահանվել, այժմ կարող են աջող շահագործութեան ենթարկվել և հեռաւոր տեղերում վաճառվել, խոշոր եկամուտներ տալով կալուածքին:

Յանձնաժողովը, որ բաղկացած է մասնագէտներից, հաշուել է, որ էջմիածինը ունի Մարցի սահմաններում մօտ երեք քառորդ միլիոնի կարողութիւն: Սակայն այդ խոշոր հարստութիւնը շահագործելու համար անհրաժեշտ է, որ կազմվի մի յատուկ վարչութիւն, որ նա զբաղվի այդ գործով ամենայն լրջութեամբ, օգնութեան հրաւիրելով մասնագիտական ոյժեր և հայթայթելով ձեռնարկութեան համար կարեւոր միջոցները: Կալուածքը կարող է բերել իւրաքանչիւր տարի մի քանի տասնեակ հազար բուբլի զուտ արդիւնք, առանց սպառելու եղած հարստութիւնը և այդպիսով ստեղծելու մշտական եկամուտի մի անընդհատ աղբիւր:

Որքան մեզ յայտնի է, յանձնաժողովը արդէն վերջացրել է իր ուսումնասիրութիւնը և իր զեկուցումը ներկայացրել է Հոգեւոր իշխանութեան: Այժմ մնում է, որ այդ իշխանութիւնը ցոյց տայ վարչական իր ընդունակութիւնները և կարողանայ կազմակերպել կանոնաւոր տնտեսութիւն: Անտառային տնտեսութիւն կազմակերպելը շատ էլ դժուար գործերից չէ: Նոյն իսկ մեր երկրում գոյութիւն ունեն անտառների շահագործութեան աջող փորձեր, որոնք շօշափելի օգուտներ են տալիս ձեռնարկողներին: Մասնագէտներ կան մեր երկրում, անտառային նիւթերը լաւ գնով են վաճառվում մեր երկրի քաղաքներում և գործարանական կենտրոններում, հաղորդակցութեան ճանապարհները կարողութիւն են տալիս շահագործութեան նիւթերը վաճառահանելու: Բայց պակաս է գործի կազմակերպութիւնը:

Արդեօք էջմիածինը ընդունակ կը հանդիսանայ այդ գործը կազմակերպելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՐՕՍԻՆԻ ԱԿՑԻԶԸ

—

Եօթը տարի սրանից առաջ, երբ կերօսինի առեւտուրը գտնվում էր սարսափելի ճգնաժամի մէջ, երբ նրա պուդը երկաթուղային կայանների մէջ ծախվում էր հազիւ 4—5 կոպէկով, մենք առիթ ունեցանք «Մշակ»-ի մէջ գրելու, թէ կերօսինի առեւտուրի զարգացման խանգարող ամենագլխաւոր հանգամանքներից մէկը ակցիզն է եւ ցանկալի է գէթ ժամանակաւորապէս վերացնել այդ ահագին տուրքը, որպէս զի այդ արդիւնաբերութիւնը, գոնէ ժամանակաւորապէս, ազատ շունչ քաշէ: Կերօսինի առեւտուրը այն ժամանակ այն աստիճան վայր էր ընկել եւ վնասաբեր դարձել, որ կէրօսինագործները գրեթէ դադարեցրել էին Սեւ-քաղաքի բոլոր գործարանները եւ կերօսին այլ եւս չէր արտահանվում: Կառավարութիւնը, տեսնելով այդ իսկապէս սոսկալի դրութիւնը, կերօսինագործներին ժողովի հրաւիրեց Պետերբուրգ, ուր նախագահութեամբ պ. Կովալեւսկու քննվեցին կերօսինի արտասահմանեան առեւտուրի անկման պատճառները եւ ըստ այնմ միջոցներ ձեռք առնվեցին. սակայն ներքին առեւտուրի մասին խօսք էլ չեղաւ, մինչդեռ ներքին առեւտուրը արժանի է ոչ պակաս ուշադրութեան:

Ռուսաստանը ունի այժմ բնակիչ մօտ 135 միլիոն. նրա գործադրած կերօսինը միջին թւով պէտք է հասնի 135 միլիոն պուդի, մինչդեռ 1899 թ. ամբողջ Ռուսաստանում գործադրված է միմիայն 43,4 միլիոն պուդ կերօսին: Առհասարակ պէտք է ասել, թէ ակցիզ սահմանելու օրից՝ կերօսինի գործածութեան զարգացումը կրիայի քայլերով է առաջ գնում: Այն աստիճան չնչին է գործադրած քանակութեան աւելացածը, որ մենք կատարեալ իրաւամբ կարող ենք ասել, թէ կերօսինի գործածութեան զարգացումը կանգ է առել: Որպէս զի աւելի պարզ եւ համոզեցուցիչ լինին մեր ասածները, առաջ ենք բերում մի քանի վիճակագրական տեղեկութիւններ:

Թւականը	Ռուսաստանի բնակիչների թիւը	Գործադրած կերօսինի քանակութիւնը Ռուսաստանում		Իւրաքանչիւր բնակչի գործադրած քանակ. միջին թւով	
1889	119,404,000	27,700,000	պ.	9,29	ֆ.
1890	120,892,000	27,400,000	»	9,06	»
1891	122,398,000	31,600,000	»	10,32	»
1892	123,923,000	31,300,000	»	10,10	»
1893	124,454,000	36,200,000	»	11,63	»
1894	126,004,000	30,800,000	»	9,77	»
1895	127,371,000	34,000,000	»	10,68	»
1896	129,180,000	36,200,000	»	11,21	»
1897	130,789,000	37,600,000	»	11,50	»
1898	132.398.000	38.600.000	»	11,67	»
1899	134,119,000	43,400,000	»	12,93	»

Այդ տեղեկութիւններից՝ գործադրված կերօսինի քանակութեան վերաբերեալները քաղված են ակցիզի վարչութեան զեկուցումներից, իսկ բնակիչների թիւը դուրս եմ բերել, հիմնվելով այն փաստի վրա, որ 1896 թւի ընդհանուր մարդահամարի ժամանակ Ռուսաստանի բնակիչների թիւը հասաւ 130,789,000 հոգու, եւ ընդունելով բնակիչների աճումը 1,23%: Այստեղ ես բաց եմ թողել հարիւրները, որոնք կարծում եմ այդ մեծ հաշուի մէջ նշանակութիւն չեն ունենայ:

Այսպէս ուրեմն, տասնուվեց տարվայ ընթացքում իւրաքանչիւր բնակչի գործադրած կերօսինի քանակութիւնը աւելացել է միմիայն 3,64 ֆունտ (12,93-9,29): Մինչդեռ նոյն ժամանակամիջոցի համար ուրիշ երկրներում այդ թիւը հասնում է 20—28 ֆունտի: Ահա ինչու համար մենք վերեւ ասացինք, թէ կերօսինի գործածութեան զարգացումը կանգ է առել: Եւ սրա իսկ պատճառը ակցիզն է, որ ապրանքի գինը թանգացնելով անմատչելի է դարձնում հասարակ ժողովրդին:

Պէտք է խոստովանել, որ վերջին երեք տարիների ընթացքում այդ հարցը շատ է զբաղեցնում կերօսինագործներին: Նա քննութեան է ենթարկվել նաւթարդիւնաբերողների XII եւ XIII ժողովներում, բայց որոշ լուծումն չէ ստացել: Վերջին XIV ժողովին դարձեալ առաջարկվեց ի քննութիւն, բայց որովհետեւ հարկաւոր տեղեկութիւններ պատրաստ չէին, յետաձգեցին մինչեւ առաջիկայ ժողովը, որ լինելու է նոյեմբեր ամսին, այս տարի:

Այդ հարցի առիթով նաւթարդիւնաբերողների XIII ժողովին պ. Ալիբէգեան ներկայացրեց մի զեկուցում, որի մէջ նա պնդում էր, թէ ակցիզը միանգամայն խախտում է կերօսինի առեւտուրի զարգացումը: Սակայն ժողովականները այդ զեկուցումը գտան ոչ լիակատար, ուստի ընտրվեց մի յանձնաժողով, նախագահութեամբ պ. Ալիբէգեանի, որ պէտք է այդ հարցի մասին բազմակողմանի զեկուցում ներկայացնէր նաւթարդիւնաբերողների XIV ժողովին: Դժբաղդաբար յանձնաժողովը չը կարողացաւ XIV ժողովին հասցնել իր զեկուցումը, ուստի եւ նրա քննութիւնը յետաձգեցին մինչեւ առաջիկայ XV ժողովը:

Այժմ կարելի է ծանօթանալ այդ զեկուցման հետ (Нефтяное дѣло, №№ 11 и 13, 1900 г.), որից երեւում է, որ շնորհիւ զեմստվոների, քաղաքային վարչութիւնների, զանազան հիմ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼՔԻՑ ԱՐԵՒՄՈՒՏՔ

(ճանապարհորդական տպաւորութիւններ)

II

Մենք Վարշավայում ենք, պատմական Լեհաստանի պատմական մայրաքաղաքում: Մեր առաջ բացվում է մի այլ աշխարհ, մենք շրջվում ենք մի այլ ազգի հետ, որ ծանօթ է մեզ միայն տեսականապէս, իր գրականութեան մի քանի արտադրութիւններով: Լեհաստանը, այն երկիրը, ուր մի ժամանակ ապրել են եւ հարիւր հազարաւոր հայեր, ուր այստեղ այնտեղ ցրված են այդ հայերի հետքերը, մեզ բոլորովին անծանօթ է այսօր: Բայց բաւական է միայն մի քանի օր ապրել Վարշավայում՝ համոզվելու համար, թէ որպիսի կուլտուրական ոյժ է ներկայացնում լեհ ազգը եւ թէ պատմական հանգամանքների շնորհիւ քաղաքական կեանքից զրկված ազգերը կարող են փայլել աշխարհիս երեսին իրանց մտաւոր եւ բարոյական կենսունակութեամբ, հոգեւոր կեանքով: Լեհերը իրանք այժմ հասկացել են, որ քաղաքական անկախութեան գաղափարը պէտք է թողնել, քանի որ ոչ մի հնարաւորութիւն չը կայ ձեռք բերել այդ անկախութիւնը. պահպանել ազգայնական անկախութիւնը կարելի է եւ կուլտուրական միջոցներով—ազգային գրականութեան, ժողովրդական հաստատութիւնների եւ այլ քաղաքակրթական գործօնների միջոցով: Խաղաղ-քաղաքակրթական մրցումը—ահա այն նպատակը, որին դիմում են այժմեան լեհ խաղաղասէր հայրենասէրները. այդ նպատակի իրագործումը աջողութիւն է գտնում այն հաշտասէր քաղաքականութեամբ, որ սկսել է վարել ռուսաց կառավարութիւնը վերջին տարիներս Թագաւոր Կայսրի հրամանով: Անհաշտ թշնամութեան լայն խրամատը, որ պեղված էր երկու ազգերի մէջ, սկսել է քիչ քիչ նեղանալ եւ լեհ հայրենասէրները, առաջաւոր մտքերը, գնահատելով Նիկոլայ II Կայսրի հաշտասէր ձգտումները, աշխատում են առաջ մղել լեհ ժողովրդի բարոյական եւ մտաւոր վերածնութեան գործը: Այն, ինչ որ դեռ միայն տասը տարի առաջ անհնարին եւ անիրագործելի էր, այսօր արդէն կատարված իրողութիւն է. տասը տարի առաջ Վարշավայում անկարելի էր տեսնել լեհ լեզուով թատրօնական ներկայացումներ, օպէրա, դասախօսութիւններ, ճառախօսութիւններ. այսօր լեհ ժողովուրդը երջանիկ է, որ լսում եւ տեսնում է այդ բոլորը. այսօր նոյն իսկ համալսարանում լեհ լեզուի եւ գրականութեան յատուկ ամբիոն կայ. այսօր այլ եւս չէ արգելվում լեհերէն խօսել հրապարակական տեղերում եւ երգել: Անշուշտ, կառավարութեան բռնած այս մեղմ եւ հաշտասէր քաղաքականութիւնը զգալի կերպով նպաստում է մերձեցման եւ հաշտարարութեան այն գաղափարին, որի իրագործումն այնքան ցարկալի է ռուս եւ լեհ իսկական հայրենասէրների համար: Լեհերը երախտագիտութեամբ յիշում են, որ Կայսր Նիկոլա II թոյլ տուեց կանգնեցնել Վարշավայի հրապարակներից մէկի վրա մի հոյակապ արձան՝ իրանց նշանաւոր գրող Միցկեվիչին, որ կազմում է իրանց ազգային ամենամեծ պարծանքը: Բայց դառնանք Վարշավայի նկարագրութեան:

Լեհական տարեգրութիւնների մէջ Վարշավայի անունը առաջին անգամ երեւում է 1313 թւին, թէեւ լեհ պատմագիրները ասում են, որ նա գոյութիւն ունէր անյիշատակ ժամանակներից ի վեր, որ իբր Վարշավա անունը առաջ է եկել Վարշ ճնկորսի եւ նրա կին Եւայի անուններից. ոմանք էլ պատմում են, որ XII դարում Վերշօվ անունով մի չեխ ցեղ եկել է Վիսլա գետի ափերը եւ հիմնել մի ափի վրա Վարշավան, իսկ միւս ափի վրա Պրագան, ի յիշատակ չեխական Պրագայի, որովհետեւ քաղաքը իսկապէս բաղկացած է երկու անջատ ափերից—Վարշավա եւ Պրագա, որոնք միայն 36 տարի սրանից առաջ, 1864 թւին, միացել են մի կամուրջով Վիսլա գետի վրա: Հաստատապէս յայտնի է, որ 1333 թւին Վարշաւան լեհական փոքրիկ իշխանութիւններից մէկի, մազովեան Պիաստ իշխանների, բնակատեղին էր եւ այդպէս էլ մնաց մինչեւ 1526 թիւը, երբ մազովեան վերջին իշխաններ Եանուշի եւ Ստանիսլավի մահից յետոյ, Վարշաւան միացվեց լեհաց թագաւորութեան հետ: Միայն 1536-ին Վարշաւան դարձաւ լեհաց թագաւորութեան մայրաքաղաք եւ սկսեց, շնորհիւ այդ հանգամանքի, մեծանալ ու զեղեցկանալ. փոքրիկ բերդից նա դարձաւ մի մեծ, գեղեցկաշէն քաղաք բազմաթիւ եկեղեցիներով եւ պալատներով: Սակայն, երբ 1655-ին շվեդական պատերազմը ծագեց, Վարշաւան ամայացաւ եւ դարձաւ աւերակների կոյտ. բնակիչները աղքատացան եւ քաղաքը այլ եւս միջոց չունեցաւ վերականգնվելու: Երկրորդ շվեդական պատերազմի ժամանակ, որ տեւեց 1702-ից մինչեւ 1711-ը, Վարշաւան փոխ առ փոխ ընկաւ շվեդների եւ սաքսօնացիների ձեռքը: Անընդհատ պատերազմները, սովը եւ սրածութիւնը, Վիսլա գետի վարարումները, համաճարակ ախտերը այնքան թշուառութիւններ պատճառեցին, որ անցեալ դարի վերջում Վարշավայի բնակիչների թիւը մի քանի տասնեակ հազարների էր հասել եւ քաղաքը աւերակների մի կոյտ էր ներկայացնում: Երբ, վերջապէս, Աւստրիան, Պրուսիան եւ Ռուսաստանը բաժանեցին իրանց մէջ լեհաց թագաւորութիւնը եւ Վարշաւան մտաւ ռուսաց տիրապետութեան տակ, ռուսաց կառավարութիւնը հոգ տարաւ վերականգնելու քաղաքը իր աւերակներից: 1815 թւից սկսած Վարշաւան սկսեց քիչ-քիչ շէնանալ, կենդանանալ եւ գեղեցկանալ: Այսօրվայ Վարշաւան իր մաքուր, լայն փողոցներով, գեղեցիկ շինութիւններով, ներկայ դարի գործ է եւ ամենայն իրաւամբ նա համարվում է երկրորդ Բերլին ու Ռուսաստանի մէջ գրեթէ առաջին գեղեցիկ քաղաքը: Վարշաւա միացած է Պրագա քաղաքամասի հետ Ալէքսանդրեան հոյակապ կամուրջով, որ կառուցվել է 1864-ին: Պատմական տեսակէտից եւ մանաւանդ տուրիստի աչքում առանձին հետաքրքրութիւն ներկայացնում է քաղաքի հին մասը, հին Վարշաւան, որ գրեթէ ամբողջովին պահպանել է իր հին բնաւորութիւնը. այդ հին մասի կենտրոնը կազմում է մի քառակուսի հրապարակ, որի շրջապատող տները շինված են XV, XVI եւ XVII դարերում եւ անփոփոխ մնացել են. դրանք պատկանելիս են եղել լեհական հին պատրիկներին, որոնցից այսօր միայն մի ընտանիք է մնացել. այդ հին տները աչքի են ընկնում իսկոյն իրանց ճարտարապետութեամբ. նրանք զարդարված են հին բարելիեֆներով, որոնք ներկայացնում են կամ մանկական դէմքեր, քնար ածելիս, կամ այծ, կամ նաւ, կամ մանուկ Յիսուսը գառան հետ. այդտեղ գտնվում է եւ Ֆուկէտի գինետունը, որ շինված է XVII դարում: Այդ հին հրապարակից սկսվում են դէպի զանազան կողմեր մի քանի փողոցներ, ինչպէս եզուիտների, ս. Յովհաննէսի, Կանոնի եւ Դեկանի փողոցները, որոնք առաջ ամբողջովին կազմում էին կաթոլիկ հոգեւորականութեան եւ, գլխաւորապէս, եզուիտների սեփականութիւնը: Եզուիտների փողոցում գտնվում է այն տունը, ուր պահպանվում է Լեհաց թագաւորութեան հին արխիվը, որի մէջ կան բազմաթիւ պատմական նշանաւոր գրքեր եւ ձեռագիրներ, ինչպէս եւ թագաւորական հին ակտեր: Պատմում են, որ

նարկութիւնների եւ ուսուցիչների, յանձնաժողովը տեղեկութիւններ ունի ստացած Ռուսաստանի զանազան անկիւններից եւ խորքերից։ Այդ բոլոր տեղեկութիւնները համարեա մի եւ նոյն բանն են ասում։ Կերօսինի գործածութիւնը շատ քիչ է տարածվում չնորհիւ թանգութեան. հասարակ ժողովուրդը գործ է ածում դեռ մարիս (лучина), իսկ շատ տեղեր կերօսինի ժամին գաղափար անգամ չունեն։ Այդ հանգամանքը սաստիկ խանգարում է ժողովրդի մէջ գրագիտութեան տարածման, աշխատանքի արդիւնաւորութեան եւ նոյն իսկ ժողովրդի առողջութեան։ Մի խօսքով զեկուցումը կազմված է բաւական ընդարձակ, բազմակողմանի եւ մենք լիայոյս ենք, որ նա կը գնահատվի ըստ արժանոյն։ Կարեւորութիւնը կերօսինի ակցիզի վերացնելու աւելի չօշափելի է ներկայ ժամանակում, երբ Բագուն երկաթուղային գծով արդէն միացրած է Ռուսաստանի ընդհանուր գծի հետ եւ բացված է Միխայլովո-Բաթումի կերօսինանցքը։ Եթէ վերացվի ակցիզը, շատ շատերը միջոց կունենան կերօսին արտահանելու դէպի Ռուսաստան, մինչդեռ այդ առեւտուրը այժմ կենտրոնացած է միմիայն մի քանիսի ձեռքում, որոնք ինչ գնով ուզում են, այնպէս էլ ծախում են։ Մինչդեռ եթէ ապրանքի առաջարկութիւնը շատ լինի, կառաջանայ մրցումն, որի անխուսափելի հետեւանքը կը լինի գների պակասումը, եւ այն ժամանակ ամեն մարդ միջոց կունենայ կերօսինի լոյսով օգտվելու։ Այն՝ ինչ պետական գանձարանը կը կորցնէ ակցիզ չը վերցնելուց, նա կարող է ստանալ երկաթուղու ֆրախտից, որովհետեւ աւելի քանակութեամբ կերօսին կը տեղափոխվի դէպի լայնատարած Ռուսաստանի զանազան անկիւնները, եւ բացի դրանից կէրօսինը, գործածական դառնալով գիւղական խրճիթներում, կերկարացնէ գիւղացու աշխատութեան ժամանակամիջոցը եւ միջոց կը տայ երեխաներին պարապել երեկոները այնպիսի լոյսով, որ վնաս չէ աչքերին։ Մի խօսքով էժան ճրագալոյսը ամեն կերպ կը նպաստէ ժողովրդի բարեկեցութեանը։ Եւ մի՞թէ այդ բոլորի համար չարժէ, որ պետական գանձարանը հրաժարվի իր մի քանի միլիոնի եկամուտներից։

Լիայոյս ենք, որ մեր կերօսինագործների խնդիրքը, որ մեծ կապ ունի պետական շահերի հետ, անկատար չի մնայ, եւ եթէ ակցիզը բոլորովին չը վերացնվի, գոնէ զգալի չափով կը պակասեցնվի։

Բագու. Ֆ. Մարգանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, սեպտեմբերի 5-ին, Վեհափառ Կաթողիկոսը, Թիֆլիսի թեմական առաջնորդի ուղեկցութեամբ, այցելութիւն գործեց Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրէզէին։ Նոյն օրն եւ եթ գեներալ-լէյտենանտ Ֆրեզէ փոխ-այցելութիւն գործեց Նորին Վեհափառութեան։

—

Պրոֆեսոր Դօկուչաեվի երկրորդ դասախօսութիւնը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, սեպտեմբերի 5-ին, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում, գրաւել էր ունկնդիրների աւելի մեծ բազմութիւն, քան առաջին անգամ։ Դասախօսութեան նիւթը վերաբերում էր լեօս կոչված հողի տեսակին, որ տարածված է Կովկասի զանազան մասերում։ Ցաւալի էր տեսնել, որ ունկնդիրների մէջ քիչ էին տեղացիներ, որոնց համար դասախօսութիւնները պէտք է ունենային աւելի հետաքրքրութիւն, քան օտարների համար։

—

Մոսկվայի գործարանատէրերը, ինչպէս հեռագրում են «Новое Время»-ին, երկիւղի մէջ են բամբակի գնի յանկարծակի թանգանալու առիթով։ Բամբակի թանգանալու պատճառն այն է, որ ամերիկական բամբակավաճառները միանալով բարձրացրել են բամբակի գները, որոնք եթէ այդպէս էլ մնան՝ բամբակեղէնի շատ գործարաններ ստիպված պէտք է լինեն կրճատել իրանց արտադրութիւնը։ Արդէն հիմա էլ միտալի գինը աւելի պակաս է, քան այն բամբակի գինը, որ գործ է դրվում նրա վրա։

—

Պրոֆեսսոր Բօրբաս երէկ, սեպտեմբերի 6-ին, ուղեւորվեց Վլադիկավկազի ճանապարհով դէպի Եւրոպա։

—

Լրագիրների ասելով՝ ֆինանսների մինիստր Վիտտէ, մի նամակով յանուն ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասսէի, տեղեկութիւն տուեց նրան, որ քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած յաւելումը Ռուսաստան ներմուծվող գինու մաքսի վրա վերացված է։ Մաքսի յաւելումը վերացված է այն գինիներից, որոնց մէջ 13 տոկոսից պակաս ալկոհոլ է պարունակվում։ Որովհետեւ թեթեւ գինիները ներմուծվում են Ռուսաստան գլխաւորապէս Ֆրանսիայից, ուստի այս արտօնութիւնից օգտվում են քաղաքացի գլխաւորապէս Ֆրանսիական առեւտրականները եւ գինեգործները։

—

Նորակոչ զինուորների ուսուցման ծրագիրը եւ եղանակը բարեփոխելու համար կազմված յանձնաժողովը վերջացրեց իր պարապմունքները։ Ենթադրվում է այս աշնանից բոլոր նորակոչներին, առանց բացառութեան, գրագիտութիւն սովորեցնել։ Ուսուցման ժամանակամիջոցը տեւելու է տասն եւ կէս ամիս։

—

«Россія» լրագիրը հաղորդում է, թէ հանգուցեալ նկարիչ Այվազովսկու անուան հիմնվելիք թոշակի կանոնները արդէն հաստատված են կառավարութեան կողմից։ Թոշակի համար հարկաւոր գումարը հաւաքել են թէոդոսիացիները։ Թոշակաւորը պէտք է լինի թէոդոսիացի եւ սովորի գեղարուեստների ակադեմիայում։

—

Հոկտեմբերի 18-ին, ինչպէս հաղորդում է «Новое Обозрѣніе» լրագիրը, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում նշանակված է Սօլ. Երեմօվի եւ Բագրատ Մունթօեվի գործը, որոնք մեղադրվում են այն բանում, որ նրանք 1897—1899 թուերին Թիֆլիսում տարածում էին 5 ռուբլիանոց կեղծ թղթադրամներ, ճանաչելով մի եւ նոյն ժամանակ դրամանենգներին։ Երկու մեղադրվողներն եւս բանտարկված են Մետեխի բանտում։

—

Մանկավարժութեան այն տարրական սկզբունքը, թէ քննութիւնները անպէտք եւ վնասակար միջոց են աշակերտների եւ ուսանողների սովորածը ստուգելու համար, այժմ հետզհետէ սկսում է գործնական կեանքի մէջ մտնել Ռուսաստանում։ Լուսաւորութեան մինիստրութիւնը այժմ արդէն այն նշանակութիւնը չէ տալիս այդ քննութիւններին, ինչպէս առաջ, եւ վերացնում է գոնէ միջնակարգ դպրոցներում դասարանից դասարան փոխվելիս։ Այժմ լրագիրները հաղորդում են, որ բարձրագոյն տեխնիկական կրթութեան կազմակերպող մասնաժողովը միաձայն որոշել է, որ պէտք է minimum-ի հասցնել բանաւոր քննութիւնները եւ հետզհետէ վերացնել այն բարձրագոյն տեխնիկական դպրոցներում։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 1-ին, երեկոյեան, քաղաքումս տեղի ունեցաւ մեծ կռիւ Ղարաբաղի եւ Պարսկաստանի թուրքերի մէջ, որի հետեւանքն եղաւ այն, որ մի ղարաբաղցի թուրք դաշոյնի հարուածով սպանեց մի թաւրիզցի թուրքի։ Նոյն գիշերը ոստիկանութիւնը ձերբակալեց 27 հոգու»։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 3-ին ժամանեց Շուշի թեմիս առաջնորդ Գառնակերեան եպիսկոպոսը. նրան ընդառաջ էին գնացել հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Տենդը համաճարակ հիւանդութիւն է դարձել թէ քաղաքում եւ թէ գաւառում»։

—

ԶԱՔԱԹԱԼԱՑԻՑ մեզ գրում են. «Կիրակի, օգոստոսի 28-ին, երգիչ Զանպապեան կօնցէրտ տուեց այստեղ, որ անցաւ բաւական աջողմանաւանդ լաւ էին թառի վրա ածած երգերը։ Հասարակութիւն քիչ կար, այն էլ բաղկացած էր մեծ մասամբ ռուս ինտելիգէնտներից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Ցայտնի ռուս գրականագէտ Ս. Իւժակով՝ «Рус. Богатство» ամսագրի օգոստոսեան համարում՝ չինական հարցը լուծելու համար՝ առաջարկում է մի վճիռ, որ կատարելապէս հակառակ է իշխան Ս. Տրուբեցկոյի կողմից առաջարկված անարդար վճռին բաժանելու Չինաստանը եւ իսպառ ջնջելու չինական պետութիւնը։ Ս. Իւժակովի յօդուածը հիմնված է առողջ դատողութեան եւ փաստերի ուսումնասիրութեան վրա. նա ծնունդ չէ չափազանցացրած երկիւղի կամ տենդային երեւակայութեան, ուստի եւ հասնում է բոլորովին տարբեր եզրակացութեան, քան այն, որին հասել է իշխ. Տրուբեցկոյ։

Ցայտնի է, որ չին-եապօնական պատերազմից յետոյ՝ Գերմանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը պաշտպան հանդիսացան Չինաստանին եւ բազմաթիւ արտօնութիւններ, որ ստացել էր Եապօնիան Չինաստանից Սիմօնոսեկի դաշնագրութեամբ, ոչնչացվեցին եւրոպական երեք պետութիւնների ստիպմամբ։ «Երախտագիտական զգայմունքից դրդված—ասում է Իւժակով—չինացիները սկզբում աշխատում էին կատարել եւրոպացիների, մանաւանդ ռուսների, գերմանացիների եւ ֆրանսիացիների կամքը։ Մենաշնորհումներ, արտօնութիւններ, կօնցեսսիաներ թափվում էին եւրոպացիների վրա, ինչպէս անսպառ աղբիւրից։ Սակայն օտարերկրացիները ընդունում էին այդ հանգամանքը, որպէս պարզ նշան Չինաստանի թուլութեան եւ չէին նկատում, որ իրանց առեւտրական եւ արդիւնագործական ձեռնարկութիւններով խախտում էին մեծ ժողովրդի ազգային կեանքի դարաւոր հիմքերը։ Դժգոհութիւնը հետզհետէ աճում ու զարգանում էր ժողովրդի մէջ, որին օտարերկրացիները զրկում էին նրա սովորական վաստակի աղբիւրներից։ Միւս կողմից՝ նոյն հաւատը Չինաստանի թուլութեան վերաբերմամբ ուժգնութեամբ գրգռեց զանազան ազգի քարոզիչներին դէպի գործունէութիւն, որ արդէն դիպչում էր ժողովրդի կրօնական զգայմունքներին։ Ստեղծվում էին պայմաններ, որոնք անշուշտ պէտք է դժգոհութիւն եւ թշնամական

այդտեղ կան ակտեր եւ հայերի հետ ունեցած յարաբերութիւնների մասին, որոնք կարող են լոյս սփռել Լեհաստանի մեծ հայ գաղթականութեան պատմութեան վրա։ Հայ եկեղեցու հետք չը կայ կամ չէ մնացած Վարշավայում. միայն մի եկեղեցում կայ մի տապանաքար, որի վրա հայերէն փորագրված է, թէ «աստ ամփոփեալ է մարմին այս ինչ խօջայի»։ Ես անձամբ չը կարողացայ տեսնել այդ տապանագիրը, բայց տեսել եւ կարդացել է բժիշկ Տ. Զաքարեանցը։

Հին քաղաքի շինութիւններից առանձին հետաքրքրութիւն ներկայացնում են թագաւորական մեծ պալատը եւ ս. Յովհաննու մայր եկեղեցին, որ կից է պալատին։ Այդ պալատը. ուր բնակում էին լեհաց թագաւորները, շինված է 1610 թուին, մազովեան իշխանների նախկին փայտաշէն պալատի տեղում։ Պալատը, որ զարդարված է իտալացի նշանաւոր նկարիչ Դօլաբելլիի նկարներով, Սեգիզմունդ III Վազա թագաւորի օրից դարձաւ արքայական բնակատեղի, բայց 1655-ին շվեդները այրեցին եւ կողոպտեցին նրան. յետագայ ժամանակներում թէեւ նա վերանորոգվեց, բայց առանց նախկին չքեղութեան։ 1806-ին, երբ Նապոլէօնը մտաւ Վարշավա, ֆրանսիացիները տարան Պարիզ պալատի բոլոր թանգագին իրերը եւ նկարները. չը կարողացան տանել միայն Բակկարէլիի նշանաւոր պատկերը, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս Իւպիտէրը հանում է աշխարհը քաոսից, որովհետեւ այդ պատկերը նկարված է գահի վրա, առաստաղում։ Պալատի մի մասում այժմ բնակվում են Վարշավայի ընդհանուր նահանգապետները։ Պալատի առաջ, մեծ հրապարակի վրա, կանգնած է Սեգիզմունդ III լեհաց թագաւորի մեծ կոթողը, որ բաղկացած է կորնթեան մարմարեայ սիւնից, 16 արշին բարձրութեամբ. սիւնի գլխին դրված է թագաւորի արձանը թագը՝ գլխին, թուրը եւ խաչը՝ ձեռքին։ Այդ կոթողը շինված է 1644 թուին եւ վերանորոգված 1887-ին։

Ս. Յովհաննու մայր եկեղեցին կամ կաստելը նշանաւոր է ոչ միայն իր գոթ-անգլիական ճարտարապետական ոճով, այլ եւ իր մէջ պարունակող թանգագին գանձարանով եւ հնութիւններով, մանաւանդ ակտերով, որոնց մի քանիսի թուականը 1402-ից է։ Ենթադրում են, որ Վարշավայի այդ ամենահին եկեղեցին կառուցված է 1250 թուին, թէեւ շինութիւնը աւարտվել է միայն 1840-ին։ Եկեղեցու պատերի վրա քանդակված են մազովեան վերջին իշխանների, զանազան պատմական գործիչների եւ հոգեւորականների արձանները, ինչպէս եւ Ստանիսլավ—Օգոստոս թագաւորի բարելիէֆ քանդակը սպիտակ մարմարից։

Նոր քաղաքի շինութիւններից նշանաւոր է Ալէքսանդրեան միջնաբերդը (цитадель), որ կառուցվել է 1832—35-ին Նիկոլա I կայսրի հրամանով, լեհական նախկին Ժօլիբօժի տեղում։ Բերդում շինված կայ եւ մի օրթոդոքս եկեղեցի, որի զանգակները ձուլված են 1831-ին խլված թնդանօթներից. այդտեղ գտնվում է եւ մի յուշարձան Ալէքսանդր I կայսրի յիշատակին. դա մի օբելիսկ է՝ 21 արշին բարձրութեամբ եւ այս արձանագրութեամբ. «Ալէքսանդր I-ին, ամենայն ռուսաց կայսրին, Լեհաստանի պաշտպանին եւ բարերարին»։

Փողոցների մէջ նշանաւոր են Սենատորսկի, թատրոնի հրապարակի եւ Կրակովի արուարձանի փողոցները։ Թատրոնի հրապարակի վրա դէմ առ դէմ կանգնած են երկու վեհապանծ շինութիւններ—քաղաքային բատուշան (խորհրդարանը) եւ մեծ թատրոնը։ Բատուշայի մէջ է մագիստրատը, որի դահլիճներից մէկում պահվում են Վարշավայի հավքարների (ցեխերի) դրօշակները։ Բարձր աշտարակից (190 ֆուտ) գեղեցիկ տեսարան է բացվում քաղաքի վրա։ Մեծ թատրոնը շինված է 1833-ին, Անտոնիո Կօրաչչիի յատակագծով։ Թատրոնի հրապարակի մօտ գտնվում է Զաժօյեան պարտիկների «Կապոյտ պալացցо» կոչվող պալատը, որ շինված է 1815-ին եւ նշանաւոր է նրանով, որ պարունակում է գրքերի եւ ձեռագիրների հարուստ ժողովածու։ Դրա մօտ, Վերբօվի փողոցում, գտնվում է «անգլիական հիւրանոցը», նշանաւոր նրանով, որ նրա մէջ մի քանի ժամ հանգստացաւ Նապոլէօն I-ը 1812-ին, երբ փախչում էր Մոսկվայից։

Վարշավան, իբրեւ մի կաթոլիկ քաղաք, ունի բազմաթիւ կաստեօլներ եւ կապելլաներ, որոնցից մի քանիսը շատ հին են։ Լեհերը, որքան սաստիկ ազգասէր են, նոյնչափ եւ ջերմեռանդ կաթոլիկ են եւ ամեն օր, ամեն ժամ եկեղեցիները լի են աղօթողներով։ Բացի դրանից, կաթոլիկները շատ սիրում են հանդիսաւոր թափօրներ կատարել՝ մի եկեղեցուց մի այլ եկեղեցի գնալով եւ անցնելով փողոցներով։ Թափօրին մասնակցում են ամենաարիստոկրատիք ընտանիքները, տիկիններ եւ մանաւանդ օրիորդներ, ամբողջովին ճերմակ հագած եւ սպիտակ քող ձգած, ի նշան անմեղութեան։ Ցանկարծ սենեակում նստած ժամանակ, դուք լսում էք մեծ խմբական երգեցողութեան ձայն. նայեցէք լուսամուտից եւ փողոցում կը տեսնէք հազարաւոր բազմութիւն, կին եւ տղամարդ, երգելով գնում են. առաջից մատաղահաս օրիորդներ, մազերը հիւսած ծաղկեայ պսակներով, ձիւնի պէս սպիտակ հագուստով, տանում են խաչ, Յիսուսի կամ Աստուածածնի արձանը, կամ խաչվառ. կամ շրջեցնում են Յիսուսի դագաղը, վրան դրած պսակներով։ Համարեա ամեն շաբաթ որ եւ է մի եկեղեցի կատարում է այդպիսի մի թափօր։ Մարիամ Աստուածածնի կուլտը (պաշտամունքը) լեհերի մէջ նոյնքան զօրեղ է, ինչպէս եւ Սպանիայի եւ Իտալիայի ամենաջերմեռանդ կաթոլիկների մէջ։ Ամեն օր եկեղեցիներում կատարվում են բազմաթիւ պատարագներ. միաժամանակ, մի եւ նոյն եկեղեցում, զանազան սեղանների վրա քահանաները պատարագում են. կայ թիւ եւ ձայնաւոր պատարագ. թիւը կատարվում է լռելեայն, ուստի եւ հնարաւոր է լինում միաժամանակ մի քանի պատարագ անել, բայց ձայնաւորը կատարվում է հանդիսաւորապէս, երգեցողութեամբ եւ մեծ երգեհոնի մասնակցութեամբ։ Տօն օրերին, թատրոնների օպերային խումբն երգում է եկեղեցում եւ պէտք է ասել, որ մի քանի կաթոլիկ եկեղեցիներում, մանաւանդ մեծ քաղաքներում, դուք կարող էք լսել հիանալի, զմայլելի երգեցողութիւն եւ երաժշտութիւն, իսկ այդ խոր կերպով ազդում է հանդիսականների վրա։ Կաթոլիկ եկեղեցում հասարակութիւնը շատ վայելուչ է պահում իրան. աղմուկ, խօսակցութիւն, ինչպէս լինում է մեզ մօտ, ամենեւին չը կայ. ամեն մարդ ունի իր սեփական նստարանը, որի վրա նստում է, կամ չոքած աղօթում է։

Օրթոդոքս եկեղեցու վարչութիւնը բաւական զօրեղ ջանքեր է գործադրում հակակշռելու կաթոլիկ հոգեւորականութեան ազդեցութիւնը։ Մինչեւ 1837 թիւը Վարշավայում կար միայն մի հատ օրթոդոքս եկեղեցի. այժմ կան մի քանի հատ եւ նշանաւոր եկեղեցիներ, բայց չը բաւականանալով դրանցով, «Սակսօնեան» կոչված յայտնի հրապարակի վրա կառուցվում է մի նոր մայր եկեղեցի, XII-րդ դարի ոճով, այն է զուտ բիւզանդական ոճով, Մոսկվայի Ուսպէնսկի տաճարի նմանութեամբ։ Այդ տաճարի շինութիւնը հաշված է 1,269,481 ռուբլի, իսկ նրա զանգակատան շինութիւնը առանձին—158,000 ռուբլի։

(Կը շարունակվի)

զգացմունք զարթեցնէին դէպի օտարերկրացիները։ Տեղ-տեղ արդէն պատահում էին եւ ընդհարումներ։

«Շանդունի նահանգում սպանվեց մի գերմանացի քարոզիչ։ Այդ դէպքը առիթ դարձաւ անցքերի մի այնպիսի կերպարանափոխութեան, որը կարելի է միայն անուանել Զինաստանի առաջին բաժանում։ Իբրեւ պատիժ գերմանացի քարոզչի սպանութեան՝ Գերմանիան գրաւեց նոյն Շանդունի նահանգում կիաօ-Ջժաու նաւահանգիստը՝ իր շրջակայքով։ Կայսր Գուան-Սուի թոյլ կառավարութիւնը վաւերացրեց այդ յափշտակութիւնը։ Այն ժամանակ միւս պետութիւնները պահանջեցին փոխարինական համահաւասար բաժիններ նաեւ իրանց համար։ Ռուսաստանը ստացաւ Պօրտ-Արտուրն եւ Տալիէնվանը՝ Կվանտունի թերակղզու հարաւային մասի հետ միասին։ Անգլիան գրաւեց Վէյ-Խայ-Վէյ եւ Կալունի թերակղզին Հօնգ-կօնգի մօտ. Ֆրանսիան Գիւան-Զէու նաւահանգիստը Գիւանդունի նահանգում, որ սահմանակից է Տօնկինին։

«Դա բաւական չէ։ Իր դաշնագրի մէջ Վէյ-Խայ-Վէյի ստացման վերաբերմամբ, Անգլիան մտցրեց եւ մի յօդուած այն մասին, թէ Զինաստանը պարտաւորվում է, առանց Անգլիայի համաձայնութեան, ոչ ոքի չը զիջանել եւ ոչ մի երկիր Եան-Ցէ-Կեանգի ջրաբաշխական շրջանում։ Այնպիսի ձեւով, որ չէր կարող կասկած յարուցանել միջազգային իրաւունքին անգիտակ մանդարինների մէջ, դա չինական կայսրի գերագոյն իրաւունքների գրաւումն էր յօգուտ Վիկտորիա թագուհու։ Այս անգամ էլ պետութիւնները փոխարինական բաժիններ պահանջեցին. եւ Զինաստանի գերագոյն իրաւունքների մի մասը—այն է սեփական երկրի մասին կարգադրութիւններ անելը, ըստ սեփական բարեհայեցողութեան,—նորից գրաւեց՝ յօգուտ Ռուսաստանի՝ Պեկինի հիւսիսակողմում գտնվող բոլոր նահանգներում, յօգուտ Գերմանիայի՝ Շանդունի նահանգում, յօգուտ Ֆրանսիայի՝ Եան-Ցէ-Կեանգի ջրաբաշխական շրջանի հարաւակողմում գտնվող երկիրներում, եւ մինչեւ անգամ յօգուտ Եապօնիայի՝ Ֆօրմոզայի նեղուցի մօտ գտնվող երկիրներում։

«Զինական կայսրի իրաւունքների գրաւումը սրանով էլ կանգ չառաւ։ Անգլիացիները իրանց դաշնագրի մէջ մտցրին մի պայման, որ չինական մաքսային վարչութեան կառավարիչը պէտք է անշուշտ անգլիացի լինի եւ նշանակվի չինական եւ անգլիական կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ։ Ֆրանսիացիները ձեռք բերին իրանց համար նոյնպիսի արտօնութիւն—թէ չինական պօստային վարչութեան գլուխ պէտք է կանգնած լինի ֆրանսիացի։ Զինաստանի անկախութեան անկումը կանգ չառաւ եւ սրանով։ Պետութիւնները հարկադրեցին Զինաստանին վերացնել այն մաքսահարկերը, որոնք առնվում էին ներքին նահանգներում շրջանառութեան մէջ գտնվող ապրանքներից—այսպէս անուանված լիկինների—եւ բանալ օտարերկրեայ առեւտուրի համար պետութեան բոլոր նաւարկելի գետերը եւ ջրանցքները։ Եթէ սրան աւելացնենք եւ այն, որ օտարերկրեայ պետութիւնները շատ տեղերում իրանց արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար պահում էին եւ զինուորական ոյժեր, այն ժամանակ կարելի է լուրջ կերպով խօսել Զինաստանի անկախութեան մասին մի այնպիսի միջոցում, երբ չինական հայրենասէրները, իրանց գլուխ ունենալով այրի կայսրուհուն, խնամակալութիւն հաստատեցին Թոյլ, Թէպէտ եւ բարեմիտ, Գուան-Սու կայսրի վրա, որ այնպէս արագ եւ այնպէս էժան գնով ցրիւ տուեց իր երկրի, իր կառավարութեան եւ իր Զինաստիայի գերագոյն իրաւունքները։ Ներկայ պատերազմը անխուսափելի հետեւանք է չինական կառավարութեան ցանկութեան վերականգնելու կորցրած անկախութիւնը։ Այս հայեցակէտով էլ պէտք է նայել նրա վրա»։

«Բայց ինչ պէտք է անել—շարունակում է Իւժակով—այդ հարցը արժանաւորապէս եւ արդարացի կերպով վճռելու համար։ Ամենից առաջ, ի հարկէ, պէտք է յետ դարձնել Զինաստանին այդ բոլոր, պարզ է որ թիւրիմացութեամբ, գրաւված իրաւունքները։ Նա կարող է թոյլ տալ քրիստոնէութեան ազատ քարոզումը, բայց չէ կարելի ստիպել նրան այդպէս անել եւ չէ կարելի չինացի քրիստոնեաների համար բացառիկ դիրք ստեղծել։ Միսիոնարները կարող են քարոզել Աստուծու խօսքը իրանց պատասխանատուութեամբ, բայց դնել նրանց եւրոպական զինուորական ոյժի պահպանութեան տակ նշանակում է, իսկապէս, քաջալերել բռնի քարոզչութիւնը եւ Աստուծու ապաւորներին դարձնել երկրային տէրերի քաղաքական գործակալներ։

«Վերադարձրէք անկախութիւնն եւ ազատութիւնը մեծ ազգին—բայց պահանջում է իր յօդուածի վերջում Իւժակով—որ ապրում է արդէն շատ հազարաւոր տարիներ, իսկ վնասի համար վերցրէք, որքան հարկաւոր է. յանցանքների համար—պատժեցէք։ Այդ տուգանքներն եւ պատիժները չեն ծառայի. որպէս պատճառներ մշտական թշնամութեան եւ ատելութեան, ինչպէս ծառայում է այն դրութիւնը, որ տեղի ունէր վերջին անցքերից առաջ եւ որը նորից կարող է կրկնվել մեծ պետութեան պատժական կեանքի ընթացքում։ Այդ դրութիւնից պէտք է խուսափել. եւ անկախ, բռնի կերպով չը քաղաքակրթվող Զինաստանը, գուցէ նոյն իսկ ժամանակաւորապէս ինքն իր մէջ փակվելուց յետոյ, նորից կը դառնայ ամենաաւելի հարեւան, խաղաղ ու հանգիստ հրակայ, որ դանդաղ կերպով առաջ է տանում իր բազմատրոհ պատմութիւնը»։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մակու, օգոստոսի 30-ին

Պարսկաստանի եւ Թիւրքիայի հիւսիսային սահմանագլուխներում ապրում են քիւրդ աշերաթներ, որոնք բաժանվում են մի քանի ցեղերի եւ կառավարվում են իրանց ժառանգական ցեղապետներով։ Այդ աշերաթների մէջ երկպառակութիւնները անպակաս են։

Կոտորածներից յետոյ Թիւրքերը մշտական զօրքեր են պահում այդ սահմանագլուխներում, իսկ պարսիկները զօրք չեն պահում,—եթէ պաշտպանող լինի, քրդերն են։ Թիւրք զօրքերը առիթից օգտվելով միանում են իրանց շրջապատող քիւրդերի հետ՝ թալան թուրան անելու։ Թիւրքահպատակ քիւրդերը օր չէ լինում, որ թալան չը տանեն Պարսկաստանի սահմանի գիւղերից, թէ բացարձակ եւ թէ գաղտնի մտնում են գիւղեր, կտրում են ճանապարհները եւ անցուդարձ անողներին կողոպտում են։ Այդ աւազակներից ազատ չեն մնում Սալմաստի, Խոյի, Մակուի եւ մինչեւ անգամ Երեւանի նահանգի գաւառները։ Պատահում են յաճախ եւ սպանութիւններ, ինչպէս վերջերս նշանաւոր՝ հէյդարանցի աշերաթի ցեղապետներից պարսկահպատակ Տահար խանի եւ իր հօրեղբօր երկու որդիների ու մի քանիսի սպանութիւնը։

Տահար խանի ցեղը գաղթել է Թիւրքիայից, Արճէշից եւ ապրում է Մակուի հարաւային սահմանում, իր սեփական կալուածներում։ Տահար խանը մօտ 40 տարեկան բարձրահասակ ու դէմքով համակրելի մէկն էր. իր ապրած մշտական կռիւներում ու տարած յաղթութիւնների համար ահագին անուն էր հանել թէ իր աշերաթի եւ թէ իր շրջակայ ցեղերի մէջ։ Ունէր եւ շատ թշնամիներ։ Մակուի թէյմուր խանը նրա ամենամեծ թշնամին էր, որ 12 տարի առաջ 10,000 մարդ հաւաքած յարձակվում է նրա վրա. Տահար խանը իր քիչ մարդիկներով կռւում է մինչեւ վերջը, մինչեւ որ միջնորդում են եւ կռիւը վերջանում է երկու կողմից էլ ահագին կորուստներով։

Թիւրքաց կառավարութեանը չը համակրող անձնաւորութիւններ յաճախ հիւր են եղել նրա մօտ, ինչպէս Բէդրխան պետի որդին, որին, սուլթանի պաշտօնեաների այնքան դիմումների հակառակ, պահում է շաբաթներով իր մօտ ու այնուհետեւ ապահով ճանապարհ գցում։ Նրա մօտ եղել է եւ ծանօթ փախստական Քեարամը։ Մի մարդ բռնել եւ կառավարութեան յանձնել, դա մի ցած բան էր համարում նա եւ երբէք իր կեանքում արած չունէր։ Վերջին ծայր սակաւապէտ ու անփողասէր մէկն էր։ Նրա տան մէջ շարունակ ուտում էին 20—50 մարդ. իբրեւ նուիրական տուն՝ գալիս էին հեռու տեղերից մոլլաներ, սէյիդներ, թիւրքահպատակ քիւրդեր, ֆակիներ. դրանք ամենքն էլ վարձատրված թէ ցորենով, փողով, ոչխարով, տաւարով, ձիով, իւրաքանչիւրը իր կարգին գոհ վերադառնում էր իր տեղը։ Իր շրջանում նա պահում, կերակրում էր ու պաշտպանում էր 500-ից աւելի մարդ, բացի երթեւեկողներից։ Քիւրդերը նրա տունը իբրեւ նուիրական տուն էին ճանաչում, «օջախ» անունով ամեն մարդ ուխտի էր գալիս։

Տահար խանը իմանում էր պարսկերէն եւ թիւրքերէն,—երկու լեզուներով էլ գրում ու կարդում էր. սիրում էր կարդալ թիւրքերէն թերթեր ու պարսկական բանաստեղծութիւններ եւ օժտված էր բանաստեղծական ձիրքով։ Հետաքրքրվում էր շարունակ քաղաքական հարցերով։ Նա մտածում էր նոյն իսկ օտար լեզու, ֆրանսերէն սովորել։ Վերջերս որոշել էր մի ուսուցիչ բերել իր համար։ Նա ցանկանում էր եւ ճանապարհորդել դէպի արեւմուտք, Եւրոպա ու մինչեւ անգամ Ամէրիկա։

Տահար խանը միայն երկու աղջիկ ունէր. մէկը ամուսնացած իր հօրեղբօր որդի Մուստաֆա պէյի հետ (ապրում է Թիւրքիայում, ուր Համիդիէի գայմագամ է), մէկն էլ 4 տարեկան է. տղայ չունէր։ Իր ժառանգները պիտի լինէին իր հօրեղբօր երկու որդիները, Մահմադ աղա եւ Ալի աղա, որոնք երկուսն էլ վերջին անգամ իր հետ միատեղ սպանվեցին։

Քիւրդերի մէջ դեռ այնքան անաղնութիւն չէր եղել, որպիսին այս անգամ եղաւ։ Քիւրդերի մէջ չէր պատահել, որ յաղթված ու անձնատուր եղած թոռունին (ազնուականին) սպանեն, բայց այս անգամ արին, եւ փոխանակ մէկի, երեք հատ միասին. այդ անողները թիւրքահպատակ թաքօրցի քիւրդերն են։

Թաքօրցիները ապրում են Շիկակ ու Հայդարանցի աշերաթների մէջտեղ, թիւրքաց սահմանի վրա, Մակուի հարաւային կողմը, կօտօրին մօտիկ. նրանց ցեղապետի անունը Հիւսէյն պէյ է, որ Համիդիէի զօրքի պաշտօնեայ է։ Հիւսէյն պէյ սաստիկ վախում էր Տահար խանից, բայց թիւրք զօրքերի եւ նրանց հազարապետ Սալէհ էֆէնդիի չնորհիւ սիրտ էր առել եւ շարունակ ասպատակում էր Սօքմանուի գաւառները։ Մինչեւ վերջերս թիւրք կանոնաւոր զօրք էլ ունենալով հետը, հասաւ Տահար խանի գիւղերին. երեք գիւղերի թալանը տարան, սպանեցին երկու նշանաւոր մարդ ու մէկին էլ գերի տանելով ականջները կտրեցին։ Տահար խանը այս բանից գրգռված հաւարի գնաց. երկու կողմից սկսվեց կռիւ եւ թալան։

Յունիսի 13-ն էր. ձիաւոր ձիաւորի յետեւից վազում էր. Տահար խանը իր հօրեղբօր երկու որդիներ՝ Մահմադ եւ Ալի աղաների հետ, ամենքն էլ իրանց մարդիկներով գնում էին այնքան յանկարծակի կերպով, որ իրանց տնեցիներին մնաք բարով էլ չասեցին։ Սահմանի վրա երկու կողմից էլ կատաղի կռիւ է սկսվում. Թիւրքերի մաուզերեան գնդակները ստիպում են յետ նահանջել տալ պարսկահպատակ քիւրդերին, որոնց ձեռքում մեծ մասամբ ռուսական բերդանկաներ էին կեղծ փամփուշտներով կեղծ էին եւ Մարտինի հրացանների փամփուշտները։ Նահանջած բօպէներին Տահար խանն ու իր հօրեղբօր երկու որդիները մի բլրակից ցած են իջնում իրանց դիրքերը պատրաստելու համար. հազիւ բլրակի ստորոտն են հասնում եւ ահա տեսնում են, որ արդէն ընկել են թաքարդի մէջ։ Երկու կողմից թշնամիները պաշարել էին, յետ դառնալ չէր կարելի, իսկ առջեւից էլ արդէն թշնամին էր, ստիպված ընկնում են թշնամու ամբողջ խուժանի մէջ։ Մի հարթ դաշտի վրա, պաշարված զօրքից ու քիւրդերից, այդ քաջերը էլի չեն ուզում անձնատուր լինել եւ կռւում են հերոսների նման։ Ընկնում է Ալի աղան. նրա եղբայր Ահմադ աղան նստում է դաշտի մէջ նրա դիակի մօտ եւ դիակը իրան դիրք բռնած կռւում է. այդտեղ նա սպանում է մի քանիսին։ Վիրաւորվում է Տահար խանը թեւից. այդ վիրաւոր միջոցին էլ կարող էր շատերին սպանել, բայց կամաց կամաց վերքի նստակութիւնից սկսում է թմրել։ Թշնամու հարիւրաւոր գնդակների տեղացած միջոցին Ահմադ աղան էլ ծանր վիրաւորվում է։ Թշնամին մօտենում է։ Ահա այստեղ է ի գործ դրվում քիւրդերի անաղնութիւնը։ Հիւսէյն պէյը հարցնում է Տահար խանին—«ինչպէս ես այժմ, հանգիստ ես»։ Տահար խանը այդ դրութեան մէջ էլի քաջի պատասխան է տալիս. «այս դրութեան մէջ էլ ես կրկնում եմ, որ չեմ սխալվել՝ մեռնելուց այն կողմ ոչինչ չը կայ. ինչ որ կարող ես արա». այս պատասխանի վրա Հիւսէյն պէյ հրաման է անում եւ իր ծառաները սկսում են կատաղի կերպով յարձակվել ուժասպառ վիրաւորների վրա. 8 հատ հրացանի հարուած տալուց յետոյ՝ ոտքերի ու քարի հարուածով Տահար խանի գլուխը ջախջախում են. նոյն կերպ վարվում են եւ Ահմադ աղայի հետ։ Կրկնում ենք, այս, կարելի է ասել, քրդերի մէջ պատահած առաջին դէպքն է, որ գերի ընկնելուց յետոյ սպանում են թոռունին։

Տահար խանի սպանումով քրդերը մեծ կորուստ ունեցան։ Կորցրին իրանց ամենամեծ մարդկանցից մէկին։ Տահար խանին յաջորդեց իր փեսայ Մուստաֆա խանը, որ վերջերս հաստատվեց պարսից կառավարութիւնից, խալաթ ստացաւ եւ պաշտօնապէս իր տեղը նստեց։ Մուստաֆա խանը համիդիէյի գայմագամ էր. Տահար խանի սպանվելուց յետոյ, Թիւրքիայից գաղթեց այս կողմը, ու իր աներջ սեփականութեան տէր եղաւ։ Մուստաֆա խանը թիւրքերէն գրել կարդալ գիտէ եւ քիչ էլ ծանօթ է պարսկերէնի. մօտ 40 տարեկան է, ունի 3 հատ տղաներ, որոնց թողել է իր կալուածքների վրա Թիւրքիայում։ Ցուսալի է, որ Մուստաֆա խանն էլ կը հետեւի Տահար խանի օրինակին, որով օգտակար կը լինի թէ իր կառավարութեանը (պարսից) եւ թէ իր ազգին։

Տահար խանը պահում էր մի հայ գիւղ Կոխպուլաղ անունով. հայեր 40-ի չափ տընտորներ էին. նա շատ պաշտպանութիւն էր ցոյց տալիս դրանց եւ միշտ օգնում էր ամեն կերպ։ Առհասարակ նա շատ սիրով էր վերաբերվում դէպի հայերը եւ միշտ պաշտպան է եղել սուրբ Թադէի վանքին։ Նրա սպանման երկրորդ օրը Մակուի հպատակ պարսիկ գիւղացիները թալանեցին հայերին ու տարան նրանց ամբողջ կայք եւ գոյքը, բոլոր տները քանդեցին. հայերը ապաստանեցին վանքում. աջողվեց նորից վերադարձնել նրանց իրանց ցանքերի վրա. միայն 6—7 տներ չինվել են. աւարից մի փոքր մաս յետ առնված է։

Նժդեհ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«С.-П. Вѣд.» լրագրում կարդում ենք. «Թիւրքիայում զանազան ազգութիւններին պատկանող կաթոլիկների մէջ նկատվում է բողոքականութիւն ընդունելու մինչեւ այժմ չը տեսնված ցանկութիւն։ Դա բացատրվում է Գերմանիայի ազդեցութեան չափազանց գերակշռող դիրքով, որ նա բռնել է ի վնաս կաթոլիկ պետութիւնների ազդեցութեան։ Կաթոլիկ դաւանութեան պետերը, որոնք գտնվում են Կ. Պոլսում, խիստ պատուէր ստացան Վատիկանից՝ ձեռք առնել բոլոր հնար եղած միջոցները «կործանիչ շարժման» առաջն առնելու համար։ Բրուսսայի հայ-կաթոլիկ թեմի վիճակաւոր եպիսկոպոս Էմմանուէլ Բալեանի հրաժարումը կաթոլիկութիւնից եւ նրա վերադարձը հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկը մեծ աղմուկ հանեցին Կ. Պոլսի քրիստոնեայ հոգեւորականութեան շրջանում։ Պապական պատուիրակ, մօնսենեօր Բօնետտի մի թուղթ գրեց պատրիարք Օրմանեանին, որի մէջ Բալեան եպիսկոպոսին անուանում է արատաւոր մարդ, որին չարժէ ընդունել հայ եկեղեցու գիրկը։ Պատրիարք Օրմանեան, իբրեւ պատասխան Բօնետտիի թղթին, ուղարկեց նրան այն գեղեցիկ վկայագրի պատճէնը, որ հայ-կաթոլիկների պատրիարք, հանգուցեալ Ազարեան տուել է Բալեան եպիսկոպոսին։ Վանի անգլիական փոխ-հիւպատոսին կողոպտելու պատճառով՝ պաշտօնից հեռացված են շատ պաշտօնեաներ թէ ոստիկանական եւ թէ դատարանական վարչութիւններից»։

—Journal des Débats» հաստատ աղբիւրից հաղորդում է, որ Վալդէկ-Ռուսսոյի մինիստրութիւնը, պարլամենտի առաջիկայ նստաշրջանից առաջ, հրաժարական կը տայ եւ կը զիջանի իր տեղը համակենտրոնացման մինիստրութեան, որի կազմի մէջ չի մտնի ոչ մէկը այժմեան մինիստրութեան անդամներից։ Արմատականներն եւ սոցիալիստները ընդհանրապէս հանված կը լինեն նոր մինիստրութեան ցուցակից։ Որպէս բացատրութիւն մինիստրութեան հրաժարականի՝ լրագիրը առաջ է բերում մի շարք պատճառներ։ Դրեյֆուսի գործը վերջացած է։ Հանրապետութեան պաշտպանութիւնը, որ մինիստրութեան «կզբնական նպատակն էր, բաւականաչափ ապահովված է։ Ցուցահանդէսը մօտենում է իր վախճանին։ Կառավարութիւնը կամենում է ազատվել հարցապնդումներից, մանաւանդ Շանուանի արշաւախմբի մէջ կատարված սպանութիւնների մասին առաջարկվելի հարցապնդումներից, երկիւղ կրելով, որ այդ հարցապնդումների ժամանակ կարող է պարտութիւն կրել եւ զրկվել սոցիալիստների աջակցութիւնից։ Այդ բոլորի վրա լրագիրը աւելացնում է, թէ հրաժարականի հարցը պէտք է վճռվի վերջնականապէս մինիստրական առաջին ժողովում։ Քաղաքական շրջաններում «Journal des Débats»-ի տեղեկութեանը կասկածով են վերաբերվում. ենթադրում են, որ Մելինը այդ լրագրի միջոցով բաց է թողել մի փորձնական լուր իմանալու, թէ արդեօք չէ՞ հասել ժամանակը կառավարութեան ղեկն իր ձեռքն առնելու։ Ընդհակառակը՝ «Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են Պարիզից, որ համակենտրոնացման նոր մինիստրութիւն կազմակերպելու ծրագիրը, առանց սոցիալիստական տարրերի, հաւանութիւն է գտնում Լուբէի, Վալդէկ-Ռուսսոյի եւ Անդրէյի կողմից։

—Սեպտեմբերի 30-ին (նոր տօմարով) բացվում է Պարիզում խաղաղութեան IX կոնգրէսը։ Այդ կոնգրէսի յանձնաժողովի անդամների մէջ են նաեւ Լ. Տոլստոյ, Է. Զոլա, Բերենսոն, բարոնուհի Սուտնէր, ունգարական մինիստր—նախարար Բերնաէրտ, Լէօն Բուրժուա, կոմս Բօտվէր եւ ուրիշները։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

5 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ոչ-պաշտօնապէս։ Զինական երկաթուղու ամբողջ գլխաւոր գիծը Ավազայոյից մինչեւ Պօգրանիչնայա, 1380 վերստ տարածութեան վրա, մեր զօրքերն անցան եւ մաքրեցին չինական զօրաբաժիններից. երկաթուղիական ծառայողները եւ ռուս բանւորները, որոնք հեռացել էին Մանջուրիայից Խաբարովսկ, Նիկոլսկ եւ Վլադիվոստոկ, վերադարձուեցին գիծը։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԷՋԷ։ Երէկ օտարազգի վարձական զինուորները կողոպտեցին եւ հրդեհեցին Կոմտիպօրը, որովհետեւ նախատեսնուում էր, որ անգլիացիները չուտով գրաւելու են նրան։ Բօէրները յետ են քաշուում Զուտպանսբէրգի ուղղութեամբ։

ՊԻՏԵՐՄԱՐԻՑԲՈՒՐԳ, Հաւատացնում են, որ Բօբէրտս ճանապարհ կընկնի Պրէտորիայից Անգլիա մօտ սեպտեմբերի 20-ին։

ՊԵԿԻՆ։ Կողոպտումները դադարացնելու համար՝ որոշված է կենդանիների համար պաշարեղէն ժողովող ամեն մի զօրախմբի հետ ուղարկել նաեւ մի օֆիցեր, որ անդորրագրեր տայ առնված պաշարեղէնի համար։

ՀԱԱԳԱ։ Պարլամենտը բացված է այսօր գահական ճառով, որի մէջ, ի միջի այլոց, ասված է, թէ խաղաղութեան համաժողովի դաշնագրերը վաւերացրած են համարեա բոլոր պետութիւնների կողմից եւ կարելի է յուսալ, որ միջազգային միջնորդ դատարանի բիւրօն, որ քիչ ժամանակից յետոյ կը հիմնվի Հաագայում, կը կատարէ իր գործը միջազգային տարաձայնութիւնները բառնալու վերաբերմամբ։

ՊԵԿԻՆ։ Ռուսաց դեսպան Գիրս յետաձգեց իր մեկնումը մի քանի օրով։ Ռուսաց զօրքերը հրաման սացան դադարեցնելու բոլոր պատրաստութիւնները ձմեռը Պեկինում անցկացնելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Ինդ-Լուին երրորդ լիազօր նշանակելը շատ ծանրակշիռ առարկութիւնների տեղիք է տալիս։ Ինչպէս հիմա պարզվում է, Ինդ-Լուի տուած զօրքերը մասնակցում էին դեսպանատների վրա գործած յարձակմանը Ինդ-Լուի տուած հրամանով, որը, սակայն, յետոյ օտարերկրացիներին վերաբերվում էր աւելի համակրանքով։ Դեսպանատների վրա գործած յարձակումներին մասնակցում էին եւ Ցինի զօրքերը, որոնք կրում էին նրա դրօշակը, բայց գործում էին զօրքերն արդեօք Ցինի հրամանով—հաստատապէս չէ իմացված. որովհետեւ Ցին ընդհանրապէս օտարերկրացիներին վերաբերվում էր բարեկամաբար, ուստի ենթադրում են, որ նրա զօրքերը յարձակման հրաման չեն ստացել։

ՊԵԿԻՆ։ Ռուսաց դեսպանին հրամայված է դուրս գալ Պեկինից։ Սէր Բօբերտ Գարտ հաղորդեց գեներալներին, որ նրանք պատրաստութիւններ տեսնեն պառջիկայ պատերազմական գործողութիւնների համար, «որովհետեւ չինական զօրքերը համախմբվում են եւ սպառնում են հաղորդակցութեան գծերին». նա կարծում է, որ նոյեմբերի մէջ կարելի է սպասել ընդհարումների։ Բանակցութիւններ անելու փորձ չի անվի, մինչեւ որ Լի-Խունգ-Զանգ չը գայ։

ՇԱՆԳՀԱՑ։ Լի-Խունգ-Զանգի մեկնումը դեռ եւս յետաձգվում է եղանակի վատութեան պատճառով,

ԲԵՐԼԻՆ։ Լօնդօնի, Պարիզի, Պետերբուրգի, Հռոմի, Վաշինգտօնի, Վիէննայի եւ Տօկիոյի գերմանական դեսպաններին ուղարկված է շրջաբերական հեռագիր, որի մէջ գերմանական կառավարութիւնը, Զինաստանի հետ դիւանագիտական բանակցութիւններ սկսելու համար, պայման է դնում, որ Զինաստանը յանձնէ պետութիւններին Պեկինում կատարված ոճրագործութիւնների առաջին եւ իսկական նախաձեռնողներին։ Պետութիւնների ներկայացուցիչներին հնարաւոր կը լինի հետամուտ լինել, թէ ով են դրանք կառավարութիւնը յոյս է դնում բոլոր պետութիւնների միաբանութեան վրա եւ առաջարկում է նրանց յանձնարարել Պեկինի իրանց ներկայացուցիչներին անուանել ոճրագործութիւնների եւ զրգռումների անպայման մեղաւորներին։

ՀՕՆԿՕՆԳ։ Արեւմտեան գետի կողմերից ստացված տեղեկութիւններով՝ այնտեղ իւրաքանչիւր քաղաքում նկատվում է, որ չինական զօրքերը եռանդով զբաղվում են վարժութիւններով. մի եւ նոյն ժամանակ զինուորական մակոյկները անդադար անց ու դարձ են անում։ Ակներեւ է, որ պատրաստվում են գործողութիւնների, բայց թէ ինչ գործողութիւնների—անհնար է ասել։

ՀՕՆԿՕՆԳ, Այսօր Վալդերզէէ հասաւ այստեղ «Սակսէն» չոգենաւով։

ԳԼԱՍԳՕ։ Այսօր նորից տեղի ունեցաւ հիւանդութեան դէպք ժանտախտից։ Մինչեւ այժմ պատահել են հիւանդութեան 21 դէպքեր. բժիշկների հսկողութեան տակ գտնվում են 110 մարդ։

ՊԵԿԻՆ։ Ամերիկական հեծեալներից 300 մարդ վաղը կը գնան հիւսիս-արեւելեան ուղղութեամբ՝ այնտեղ նեղութեան մէջ գտնվող քրիստոնեաներին պաշտպանելու եւ տեղի դրութիւնը հետախուզելու համար։ Ենթադրվում են եւ այլ այդ տեսակ արշաւանքներ։ Բոլոր ազգերը սահմանել են առանձին դատարաններ։ Գերմանացիները գողութեան համար ենթարկում են յանցաւորներին մահվան պատժի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ Է

Երկու յարկանի քարաշէն տուն՝ 196 քառ. սաժէն գետնով, որ պատկանում էր հանգուցեալ Յովսէփ Արտեմեվիչ Ամիրովին եւ գտնվում է Թիֆլիսում, Սօլօլակում, Լերմօնտովսկայա (Նագօրնայա) եւ Բոլշչեվսկայա փողոցների անկիւնում, Փրիդօնովների տան կողքին։ Պայմանների մասին կարելի է իմանալ դեղագործական ապրանքների առեւտրի Կովկասեան ընկերութեան գրասենեակում, որ գտնվում է Տէատրալնայա փողոցի վրա, սեփական տան մէջ։ 1—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ այս տարվայ սեպտեմբերի 9-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Թիֆլիսի առաջին քաղաքամասում գտնվող 2-րդ Գունիբեան փողոցը քարայատակելու աշխատանքները, 292 քառ. սաժ. տարածութեամբ, 1022 ր. 80 կ. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 1—3

Մի օրիորդ, որ աւարտել է Մոսկվայի գիմնազիան եւ մասնագիտօրէն ուսումնասիրել է ֆրանսերէն լեզուն թէ տեսականապէս եւ թէ գործնականապէս, ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ։ Ցանկացողները կարող են տեսնել ժամը 12—2-ը։ Бебудовская [Садовая], д. Лисицева, кв. Хачатуровой. (հ. չ. չ.) 1—3

ՄԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ընդունում են հասոյթաւոր գիշերօթիկ աշակերտներ (пансіонерами) կրկնութեամբ, առեւտրական եւ այլ միջնակարգ դպրոցների համար։ Հասցէն՝ Графская улица, № 10, домъ Эліозова. 3—6

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արհեստանոցում ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 27-ից։ Արհեստանոցին կից բացվում է եւ լուացարան, որտեղ ցանկացողները կարող են սովորել հարթուկել եւ օսլայել սպիտակեղէն եւ զանազան նուրբ գործուածքներ։ Լուացարանում ընդունելութիւնը տեղի կունենայ նոյնպէս օգոստոսի 27-ից։ 5—10

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՂԻՍԿՈՊՈՍ ՍԵԳՐԱԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ.

ԳԻՆՆ Է 1 Ր.

Թիֆլիսում դիմել—Կենտրօնական եւ Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցներին, նոյնպէս եւ Աղէքսանդր Ստեփանեանցին (Զուբալովի քարվանսարայում)։ (ե. հ. չ.) 8—10

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկների համար։ Միատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (նախկին Սադովայա), սեփ. տ. № 29։ (ե.չ.) 24—25

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՏՆԱՑԻՆ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Մերվ գնալու համար, 300 ռուբլի ռոճիկ, ճանապարհածախս, ուտելիք եւ բնակարան։ Պայմանների մասին դիմել՝ Լօրիս-Մելիքեան փողոց, № 11, Գ. Գալստեանցին։ 2—4

Վիէննայում լոյս տեսաւ

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ“

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կարիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.

(ձանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/₂, Mechitharistengasse 4.

(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ)

(հ. չ.) 8—20

Լոյս տեսաւ

ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆԻ

ՈՒՐԱՆԻԱ

ասողագիտական վէպը

թարգմ. ֆրանս. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ.

Գիրքը տպված է լաւ եւ չքեղ թղթի վրա, 376 երես, մի՛ջակ գիրքով եւ արժէ 1 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Г. Галустянцу, Лорис-Меликовская, № 11. 1—10

Մ. ՄՈՒՐՏԱԳ

վերսկսեց անգլիական լեզուի դասերը. երաշխաւորում է արտասանութեան կանոնաւորութիւնը. նշանաւոր զիջումն է անում մի քանի աշակերտներին միասին—իր բնակարանում։ Մադատօվսկայա փ. № 4. 3—5

Ընդունվում են **ՊԱՀԼԵԲՆԻԿԸ**-ներ փոքրահասակ մի բարեկիրթ հայ ընտանիքում՝ ձեռնտու պայմաններով։ Տունը գտնվում է՝ աշակերտների համար շատ յարմարաւոր փողոցում։ «Коммерческое училище»-ին կից՝ Екатерининская ул., № 2, երրորդ դուռը։ (ե. ո.) 2—3

Կար ու ձեւի ԴՊՐՈՑ

ՕՐ. ՆԱՏԱԼԻԱ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

Աշակերտուհիների ընդունելութիւնը ամենայն օր է։ Պարապում են երկու նոր տեսակ մեթոդով։ Հասցէն. Թիֆլիս, Մողնու եկեղեցու հանդէպ. № 13. 5—6

Բժիշկ Գ. Մեհրաբեան

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ]. 4—25

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԻՐԵԿՏՈՐԸ

խոնարհաբար խնդրում է այս տարվայ մայիս ամսին դպրոցում ընդունված աշակերտների ծնողներին և խնամակալներին, որ հոգս քաշեն ուսման կիսամեայ վարձի վճարման մասին մինչեւ սեպտեմբերի 8-ը, որովհետև, հակառակ դէպքում, կանոնադրութեան 14-րդ յօդուածի համաձայն, նրանց տեղերը պարապ կը համարվեն։

(7-ին եւ 8-ին) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ.

I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. „ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ“։ Գ. տպագր.

Գինը 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. „ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ“։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (ե. հ. չ.) 6—10

Սովորեցնում եւ պատրաստում եմ երկու սեռի անձանց, չորս ամսվայ ընթացքում, լիակատար երաշխաւորութեամբ և, կարեւոր դէպքերում, պարապմունքներ գտնելու համար յանձնարարութիւններ տալով

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ.

Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով։ Առեւտրական թուաբանութիւն։ Գեղագրութիւն. ուսումնասիրութիւն զանազան տեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Կարելի է տեսնել առաւօտեան 9—10 ժ. եւ երեկոյեան 4—7։ Պարապմունքները սեպտեմբերի 20-ից.

Հասցէ. Սօլօլակ, Գանձասարայա փողոց, տուն Թամամշեանի, № 26, բնակարան 9։ Սերգէյ Վասիլ. Աբրահամեանցին։ (ե. հ. չ.) 6—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 սեպտեմբերի ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօլին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՈՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 9—20

Дозволено цензурою, Тифлисъ. 6 Сентября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.